

ԱՍՍՈՒՆՔՈՂ ԲԱՆԱՍԵՂԾԻ ԳՐԱԿԱՆ ՀՈՒՆՁՔԸ³⁹

Սոկրատ Խանյան

Բանալի բառեր՝ Արմեն Արամյան, Հակոբ Գույումճյան, բանաստեղծ, ասմունքող, Բեյրութ, «Հոգեհաստոր», «Հակոբ Գույումճյանի արվեստը»:

Սեղանիս Արմեն Արամյանի «Հոգեհաստոր [1]» ժողովածուն է, որն ինձ է նվիրել կրտսեր գրչեղբայրս՝ Ռոբերտ Եսայանը: Մինչև այդ, ես գիտեի, թերություն մի տաղանդավոր ասմունքողի՝ Հակոբ Գույումճյանին, գրել էի նրա արվեստը ներկայացնող ժողովածուի առաջարանը՝ «Հայոց սրտերն իրար միացնող ասմունքի Վարպետոր» վերագրով: Նրանում նշել էի, որ աշխարհասկյուռ հայության բազմաթիվ արվեստագետներ հիացմունքով են ունկնդրել ու արտահայտել իրենց բարձր կարծիքը Հակոբի ձարտասանական արվեստի մասին, նրան դասելով Վաղիմիր Արացյանի, Ազատ Գասպարյանի, Սարգիս Նազարյանի և մյուս հայ տաղանդավոր ասմունքողների շարքը: Գիտեի, որ նրա շրթերից հնչել և այսօր էլ հնչում են Սայաթ-Նովայի, Եղիշե Չարենցի, Պարոյր Սևակի, Համո Սահյանի, Վահան Թեքեյանի, Գևորգ Էմինի, Սիլվա Կապուտիլյանի, Վահագն Դավթյանի, Ռազմիկ Դավոյանի և այլ ականավոր բանաստեղծների բազմերանգ ստեղծագործությունները: Սակայն չգիտեի, որ «Հոգեհաստոր» գրքի հեղինակ, բանաստեղծ Արմեն Արամյանը հենց ինքը՝ ասմունքող Հակոբ Գույումճյանն է:

Բացելով գիրքը՝ կազմի առաջին էջի վրա երիտասարդ բանաստեղծի խոհուն լուսանկարի տակ համառոտ խոսքը կարդացի. «Բուն անունով՝ Հակոբ Գույումճյան: Ծնած եմ 1944-ին, Լիբանան: Ազգային Արգարյան և Վահան Թեքեյան նախակրթարաններից հետո Երկրորդական ուսումն շարունակած եմ Հ.Բ.Ը. Միության Հովակիմյան-Մանուկյան վարժարանում: Բարձրագույն կրթությունն ձարտարապետության մեջ ուսած եմ Երևան, արևելահայերեն գրելու պիտակով պատճառներից մեկը: Բանաստեղծություններիս այս «Հոգեհաստոր» տպագրվում է առաջին անգամ և սա էին առաջնեկը»:

Մտովի թևելով Բեյրութ՝ կրկին ու կրկին սիրուս տրոփեց մեկ՝ ցավի զգացումով՝ առնչված Հայոց ցեղասպանության չմոռացվող ողբերգության հետ, որի բեկորներից է նաև Հակոբը, մյուս կողմից՝ ցավող սիրուս թրթաց հապրոտության շողարձակումով, որ հայ ժողովուրդը ի հեճուկս մարդակեր թշնամու, վերընճուղովեց, հառնեց, հմչեցրեց իր առասպելական ծայնը աշխարհի բոլոր ծայրերում: Եվ այդ էպոսային խոսքի մի երանգն էլ հենց «Հոգեհաստոր» ժողովածուի հեղինակի ծայնն է, ծայնը Հակոբ Գույումճյանի՝ Արմեն Արամյան գրական անունով:

Հազվագյուտ են այն ստեղծագործողները, որոնց երկերից առաջնեկը բարձրածայնում է, որ աստծո կամոր ու շնորհով ծնված բանաստեղծ է նրա հեղինակը: Համարձակորեն ու հանգիստ խոնջով կարող եմ ասել, որ նման ստեղծագործողներից է Արմեն Արամյանը, նոյն ինքը՝ ասմունքող Հակոբ Գույումճյանը:

Գիրքը լույս է ընծայվել Բեյրութում 1981թ., երբ լրացել էր հեղինակի 32-ը, հասուն մի տարիք, որը նախ մնողում է՝ արժե՝ արյուք բռնել այդ գործը: Ժողովածուն կարդացի՝ մի շնչով ու վերընթերցեցի, ստանալով գեղագիտական այն հաճույքը, որ պատճառում է արվեստի յուրաքանչյուր հաջող ստեղծագործություն:

³⁹ Հողվածն ընդունվել է 25.12.17:

Հողվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ հայոց լեզվի ամբիոնը:

ՄԵՐՈՐԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Ավելորդ չէ ընդգծել, որ հազվադեպ երևոյթ է, երբ արևմտահայերենի ներկայացուցիչն այդպիսի հաջողությամբ տիրապետում է արևելահայերենի նրբերամզներին: Այս երևոյթը միաժամանակ ապացուցում է, որ արևմտահայերենի և արևելահայերենի արմատը նույնն է, նույն լեզուն է, կրնկրեն նույն ժողովրդի ստեղծած ծաղիկների բոյրն ունեցող երկու ձյուղերը՝ Հայոց լեզու անունով: Կարևոր է ընդգծել հեղինակի պատկերավոր մտածողությունը, կյանքը բանաստեղծորեն ընկալելու աստծո պարզեց, ինքնատիպության հասնելու արդյունավետ ձգուումը, խոհականությունը, մարդասիրությունը, ազգային արժանապատկությունն ու նրա ցավը կրելու պատրաստականությունը, մարդկության ճակատագրի հայավարի տնտղումը, սիրո, ընտանիքի հանդեպ պատասխանատվության զգացումը և այլն:

Լրջախոհի բանաստեղծությունների հաջող ժողովածու է կազմել հեղինակը: Նրանում ընդգրկված «Նշխար», «Ի խորոց սրտի», «Վերադարձ», «Հոգեհատոր», «Տաղի շուրթերով», «Քարամնձավային քառվաց» բաժիններում ընթերցողի հետ գրուցում է կյանքը փիլիխոփայորեն ընկալող բանաստեղծը:

Ճիշտ է մտածում հեղինակը՝ իր երգը համարելով նշխար, այո, տեղին բնութագրում՝ հոգնոր հաց: Իսկ ո՞վ չգիտե, որ հայ ժողովուրդը ոչ միայն հոգնոր հացի սիրահարն ու պաշտպանն է, այլև նրա արարող՝ «Վահագնի ծնունդից» մինչև Նարեկ, Նարեկից մինչև Մեծ Լոռեցի, Սիամանթոյից-Վարուժան, Չարենցից-Պարույր Սևակ, Վահան Թեքեյանից-Մուշեղ Իշխան, Համո Սահանից-Միլվա Կապուտիկյան և այլ մեծություններ:

Քաջածանոթ լինելով մեր պոեզիայի այս աստղաբույյին՝ Արմեն Արամյանը սրտի դողով դիմում է բանաստեղծությանը, նրան համարում «հոգու մեջ վարվող կարոտանքի քուրա», «Ներկայի մեջ ծիոդ... հավերժի խոստում», «Անասելի պահ... բարերի մեջ մանրած»:

Նա «սրտի անշեջ հրով» կովելով իր տողերը, հավատով բարձրածայնում է.

Ինձ ամենաչերմ արեգակնային շողով ես օծում,

Շողով արարման,

Որ աստվածանա իմ մարմնում ապրող մարդ մահկանացուն...

...Ուզում եմ գտնել սահմանս վաղվան,

Որ կարողանամ նրանից այն կողմ

Ինքնահաստատման երազանքներիս երգը դրոշմել...[2]

Ինքնահաստատման ձգուումով բանաստեղծը դիմում է ընթերցողին. «Քո հոգին եմ քեզ բերում իմ խոսքով...»: Սակայն սովորական խոսք չէ բանաստեղծությունը: Արմեն Արամյանը համարում է, որ երգը խորք ունի, բազմաշերտ ընդերք, և ինքն իր հետ խորհրդածելով, նշում է.

Մաքուր շուրթերով,

Դու իշիր, պեղի Ռ

Ընդերքը սրտիդ,

Թաքուն ընդերքը...

Ինկ այնտեղ գուցե

Վերծանվի, պարզվի՝

Առեղծվածն այս մութ՝

Այս տիեզերքը...[3]

Բանաստեղծը լավ է համկանում, որ երգի ճամփան անցնում է սրտի միջով, այդ նշանակում է, որ պետք է որոնել ու գտնել երգը սրտի: Ու վստահ է նա իր հանդեպ, գրելով «Ծնվեցիր ինձ պես ծննդյանս հետ, դու կայիր իմ մեջ ինձանից առաջ...» (էջ

ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

21): Իսկ երգը ծնված է սրտի հետ մեկտեղ, նման խոսքն է դարնում թևավոր: Այստեղ է, որ բանաստեղծն անդրադառնում է իր անցած ձանապարհին, ասել է թե՝ Եղեռն տեսած իր մայր ժողովրդի տառապալից ուղուն, հպարտությամբ շեշտելով.

Բայց հարնեցի նք կրկին,
Վերապրեցի նք նորից,
Զորանալով կրկին
Վեր բարձրացանք հողից: [4]

Գրքի «Ի խորոց սրտի» շարքը բանաստեղծի խոնարհումն է փրկված, հայության ոլխտատեղի դարձած, հայի դիմագիծը պահպանող միակ օրորանը՝ Հայաստան անունով: Եթոնային աղբյուրի պես զիտ երկնքի պես կապուտաչ ծաղիկների պես վայրենաբույր երգեր են շարքի գործերը: Այս կարելի է համարել մեր նորօրյա հայրենապատումի լավագույն շարքերից մեկը, որտեղ չես կարող տարանջատել որդուն ու մայր երկրին, որոնց լինելությունը պայմանավորված է մեկը-մյուսով: Դիմելով մայր Հայաստանին, բանաստեղծ-որդին ուղղակի ճշում է.

Դու մեր աշխարհին ես,
Մեր ներաշխարհին ես,
Մեր հույսի փոքրիկ ու սուրբ նշխարն ես,
Աշխարհ Հայաստան.
... Դու սիրու-մասնիկն ես,
Կուռ հավաստիքն ես,
Դու՝ սերն այսօրվան, վաղվան հարսնիքն ես,
Աշխարհ Հայաստան: [5]

Քայլ առ քայլ բանաստեղծը շրջում է Հայոց երկրում, ծմկի է զալիս գեղարդի առջև, ջրդեղում իր հավատամքը, հասնում պատմության խորքերը, բացականչում՝ «Ո՞ տայր ինձ զժուխն ծխանին», կրկին նարեկան հրամայականով հյուտում խոսքը «Ի խորոց սրտի», օստարության մեջ երկրին անհագ ծարավով ապրող հայորդու անունց բացականչում: «Մորս կաթնաբույր գորովով սնվել, Ու թափանցել ես թաղանքների մեջ իմ գիտակցության», թրթռացող սրտով խոստովանում:

Հայաստան աշխարհ.
Ես քեզ ունեցա
Լոկ իմ արյունի հուշերի ճամբով.
Քեզ ճանաչեցի
Լոկ երազներիս թռիչքի չափով.
Դու՝ Աստծուց ավել անշղափենի,
Եվ Աստծուց ավել բարձրացած իմ մեջ,
Իմ հավատամքի աննարմին տաճար,
Իմ Արարատյան կարուտանքների վեհագույն կատար: [6]

Աշխարհի մեծերը ճիշտ են նկատել, որ պոեզիան հիմնականում ծնվում է կարությոց՝ կարուտ մանկության, պատանեկության, երիտասարդության, առաջին սիրո շիկնանքի, ապրող ու կյանքից հեռացած հարազատների, բնօրրանի ու անփոխարինելի հայրենի եղերքի, ընդհանրության մեջ կյանք կոչվող առեղծվածի բազմաժակ շերտերի հանդեպ: Արմենի ժողովածուի «Վերադարձ» շարքը ևս այդ է վկայում:

Շարքի բանաստեղծություններն ասես քնարական պոեմի միահյուսված պատկեր են, որոնք աչքի են զննում անմիջականությամբ, կյանքի բնական ընթացքի կարուտակուր պատկերներով, ափսոսանքի ու գոհացումի, կորցրածի ու գտածի անթաքույց զգացումներով:

ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Քաղցր վերհուշի արինքնող ճիշեր են «Գնամ անտառում հովանամ նորից», «Մանկության մսուր», «Իմ ծառը իիշեց» և այլ երգեր: Ինչ վերաբերում է «Զմեռը զնաց» ու «Արև, արև» հյուսվածքներին, դժվար չէ նկատել անմահ Միսաք Սեծարենցի արևերգության անմիջական ազդեցությունը, որի սահմաններից Արմենը կարողացել է դուրս գալ դեպի քնքշության շառավիդ: Խրախուսելին այս է, որ բանաստեղծը արևի հետ գրուցելիս չի մոռանում մայր ժողովրդի ապրած տառապանքը՝ այն համեմատելով «անցնող ձմռան» հետ:

Տարիներ առաջ իմ սիրային բանաստեղծությունների շարքը անվանել եմ «Քաղցր տառապանք»: Կարդալով Արմենի «Հոգեհատոր» շարքը՝ կրկին համոզվեցի, որ հայ բոլոր բանաստեղծները սերը դիտարկում ու գնահատում են մեր պակերի կողմից սրբագրժված, քրիստոնեական հավատարմության ուսկեցիր մտած բանաձևը: Հենց դրանով է բացատրվում հայ քնարերգության մեջ հաստատուն տեղ գտած սիրո թեմայի բացահայտման դժվարին ճանապարհը: Մի կողմից՝ ներկայացվում է սիրո արարիչ ուժը՝ մարդկային երջանկության անփոխարինելի աղբյուր հասկացությամբ, մյուս կողմից՝ այդ կենարար աղբյուրին հասնելու ու ծարավն առնելու տառապալից դժվարությունը: Ասել է թե՝ հավատարիմ սիրո աստվածանվեր գաղափարն է, որին դաշտանելը նաև ընտանիքի փլուզում է, երջանկության կորուստ:

Այսպես՝ Արմենի երգերում անբիշ սիրո կորուստը անձնական ծանր ապրումների ֆոնի վրա ներկայացված է որպես կյանքի իմաստի կորուստ:

Սիա թե ինչպես է բանաստեղծականացնում Արմենը կորուսյալ սերը՝ դիմելով սիրո էակին:

Եթե չլիներ այն, ինչ որ եղավ,
Եվ լիներ այն, որ չեղավ իմ կյանքում...
Դու չէիր մնա գիշերներն անքուն,
Ես չէի լինի թափսիծով նկուն,
Դու չէիր մնա այսպես անհենակ,
Ես չէի լինի այսքան միայնակ: [7]

Եվ ոչ միայն այդ: Սիրո կորստի չմարող ցավն ու կսկիծը վերածվում են ակսուսանքի փիլիսոփայության, որի բանաստեղծական արտահայտություն կարելի է համարել հետևյալ քայլակը.

Մռայլ է հոգիս, ամպամած ու թաց,
Թաց է ամեն կողմ, ամեն քայլ ու երգ,
Հոգիս դեռ թաց է՝ ինչպես քո լացած
Աչքերում թաղված երազն անեզերք: [8]

Նման ապրումի արտահայտություններ են նաև «Քեզանից հեռու», «Եվ կգա մի օր», «Տիսուր երգ» գործերը, որոնց առանցքը ոչ միայն սիրո կորստի գաղափարն է, այլև հավատարմության անփոխարինելի ուժը: Հենց վերջինիս քաղցրության զգացումն է, որ արտահայտվում է այսպես.

Սպասումներս ու տեմչերս բորբ.
Կարոտով ծիրուն՝ հուսադրում-հաց են,
Կամչում եմ, արի...
...Օրերն առանց քեզ՝ հողմերի դիմաց
Աղօրիքն հանած փուշ հողմաղաց են,
Կամչում եմ, արի...[9]

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Ծանոթանալով Ա.Արամյանի «Հոգեհաստոր» ժողովածուի բոլոր բաժիններին, զմբոցիննելով նրա անմիջական ու սրտախոս երգերը՝ միաժամանակ համոզվում ես, որ նա քաջածանոթ է հայ դարավոր պոեզիայի, առանձնապես միջնադարյան բանաստեղծության հունձքին: Այդ են վկայում գրքի «Տաղի շուրթերով» շարքի հյուսվածքները, որոնց արմատները հասնում են Գ.Նարեկացու, Ն.Քոչակի, Սայաթ-Նովայի ստեղծագործական ակունքներին, ինչպես նաև Չարենցի հղոր գանձարանին:

Կյանքի դրամատիկ ընթացքի, մարդկային հակասական ապրումների, իին ու նոր օրերի իրարամերժ ընթացքի, պատերազմների եզրերին վերուվար թռչող արդի տիրակալների, ցեղասպանության ահասարութ երևոյնների խոսուն պատկեր է գրքի վերջին՝ «Քարանձավային քառսից առաջ» պոեմը:

Արմեն Արամյանը որպես բանաստեղծ ծևավորվել է հետշիրազյան շրջանի այնպիսի աստղաբոյի օրոք, ինչպիսիք են՝ Պ.Սևակը, Հ.Սահյանը, Վ.Դավթյանը, Գ.Էմինը, Ս.Կապուտիկյանը: Եվ պատահական չէ առանձնապես սևակյան ու սահյանական քնարերգության նկատելի ազդեցությունը նրա որոշ բանաստեղծությունների վրա: Սակայն նշենք նաև, որ այդ հյուսվածքների մեջ հաճելիորեն նկատվում է Արմենի ստեղծագործական մտահղացումների ինքնուրբուն ու պատկերների բարձությունը:

Գրախոսելով Արմեն Արամյանի «Հոգեհաստոր» ժողովածուն՝ մի մտահղություն համակեց մեզ: Ինչո՞ւ տաղանդավոր այդ բանաստեղծը 1981-ից հետո այլևս չիրատարակեց երգերի գիրք:

Մեզ հայտնի է, որ Ա.Արամյանը, նույն ինքը՝ Հակոբ Գոյումճյանը, ճանաչված ճարտարապետ է, հանրահայտ ասմունքող: Արդյո՞ք, նման նաև ագիտությունները կարող են խանգարել բանաստեղծության աշխարհ գալուն: Ինչ էլ լինի, Արմեն Արամյան-Հակոբ Գոյումճյամը որպես ասմունքող իրեն դրսևում է որպես բանաստեղծ: Այս երևոյաց ժամանակին նկատել են շատերը: Իսկ ակադեմիկոս Լևոն Հախվերդյանը դեռևս 1984թ., ներկա լինելով Կահիրեկի Կոկանյան սրահում գրական համերգին, Հակոբի մասին գրել է. «Հակոբ Գոյումճյանն ավելի քան մեկուկես ժամ լարված պահեց ունկնդիր հասարակությունը, հազվագյուտ երևոյթ ասմունքի դժվարին ասպարեզում, արվեստ, ուր արտիստը հանդես է գալիս անգեն՝ ինքն իր «բնական տեսքով» և իր խոսքով:»

Այստեղ հաջողության գաղտնիքը մեկն է՝ լարելու մեկ ուրիշին, ուրիշներին հովանունքով համակենու համար դու ինքո պետք է հուզված լինես, ներշնչելու համար ինքո պետք է ներշնչվես, այլապես ինչքան էլ տպավորիչ լինեն քո տեսքն ու ծայնական տվյալները (որոնցով մեր արտիստն օժտված է լիովի), ներգործություն չեն ունենա:

Ահա այս հատկությունն է, որ այդ գեղեցիկ երեկոն անտարակուսելի հաջողություն բերեց Գոյումճյանին [10]:

Դժվար չէ նկատել, որ ասմունքող Հակոբ Գոյումճյանի հոգու խորքում հնչում է աստվածաշնորհ բանաստեղծի ծայնը, իսկ բանաստեղծական ներաշխարհում՝ ճարտասամական արվեստի ճիշը:

Արվեստագետի ճանապարհը շարունակվում է միաձույլ: Տարիների բարձունքում ասմունքող Գոյումճյանի հայաբույր հունձքի մեջ իրենց տեղն են գրավելու նաև բանաստեղծ Գոյումճյանի սրտաբուխ երգերը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Արմեն Արամյան, Հոգեհատոր, Բեյրութ, 1981:
2. Նույն տեղում, էջ 11:
3. Նույն տեղում, էջ 18:
4. Նույն տեղում, էջ 25:
5. Նույն տեղում, էջ 30:
6. Նույն տեղում, էջ 37:
7. Նույն տեղում, էջ 52:
8. Նույն տեղում, էջ 53:
9. Նույն տեղում, էջ 66:
- 10.Հակոբ Գույումճյանի արվեստը, «Դիզակ պյուս» հրատ., 2017, էջ 12-13:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ասմունքով բանաստեղծի գրական հունձքը Սոկրատ Խանյան

Սույն հոդվածում վերլուծվում ու գնահատվում են Արմեն Արամյանի (նոյն ինքը՝ ասմունքով Հակոբ Գույումճյան) «Հոգեհատոր» ժողովածուի բանաստեղծական շարքերը: Նշվում է, որ հանրահայտ ասմունքով Հակոբ Գույումճյանը կրթություն է ստացել Բեյրութի հայկական կրթօջախներում, ապա ավարտել Երևանի պետական պոլիտեխնիկական համալսարանը: Հետագայում Գույումճյանը աշխատելով որպես տաղանդավոր ճարտարապետ, հրատարակել է նաև բարձրարվեստ բանաստեղծությունների առանձին գիրը՝ արևելահայերեն: Ընդգծվում է, որ Հակոբ Գույումճյանը, տիրապետելով արևմտահայերենին և արևելահայերենին, հայ պոեզիայի լավագույն նմուշները հաջողությամբ հասցնում է աշխարհասփյուռ գրքասեր հայերին:

РЕЗЮМЕ

Литературная жатва чтеца-поэта Сократ Ханян

Ключевые слова: Армен Арамян, Акоп Гуюмчян, поэт, чтец, Бейрут, “Душа моя”, “искусство Акопа Гуюмчяна”.

В данной статье рассматриваются и анализируются поэтические циклы сборника “Моя душа” Армена Арамяна (он же чтец Акоп Гуюмчян). Отмечается, что знаменитый чтец Акоп Гуюмчян получил образование в армянских учебных заведениях Бейрута, а позже окончил Ереванский политехнический институт. После этого Гуюмчян проявил себя как талантливый архитектор. Он издал отдельную книгу стихов на восточно-армянском языке. В статье подчеркивается также, что Акоп Гуюмчян, владея западно-армянским и восточно-армянским языками, сумел достичь лучшие образцы армянской поэзии до армянских читателей, рассеянных по всех уголкам мира.

SUMMARY
Literary harvest of the poet-narrator
Sokrat Khanyan

Keywords: Armen Aramyan, Hakob Gyumchyan, poet, reader, Beirut, "My soul", "art of Hakob Gyumchyan".

This article examines and analyzes the poetic collection "My Soul" by Armen Aramyan (also the reader Hakob Gyumchyan). It is noted that the famous reader Hakob Gyumchyan was educated in the Armenian educational institutions of Beirut, and graduated from the Yerevan Polytechnic Institute. After that, Gyumchyan showed himself as a talented architect. He published a separate book of poems in the Eastern Armenian language. The article also emphasizes that Hakob Gyumchyan, having mastered the Western Armenian and Eastern Armenian languages, managed to convey the best examples of Armenian poetry to the Armenian readers scattered throughout all corners of the world.